

## LA PROFUNDIS

Ա.

I

Երեկ էր դեռ ... երե՞կ էր թէ դարեր առաջ  
 ես կէս մը փուն ու կէս մ'արթուն մօրքս գիրկին,  
 Լուսնակ փութիկն վերէն, ինչպէս խոտը մէկ աչք,  
 Կը նայէր վար կարօսագին:

Ու կը հօտէր, կը վարարէր գետը կեանքին,  
 Դուռին առջեւ ու տունէն ներս, փողոցին մէջ,  
 Խաղով, երգով, աշխատանքով երանգագին,  
 Ու կը թրէր խնճոյքն անվերջ:

Երեկ էր դեռ ... բայց անցեր է կեանքն այդ անդարձ,  
 Բայց անցեր են անոնք բոլոր որ հոն իմ շուրջն  
 էին երբեմն. զօդուած սիրով պարզ, աննախանձ ...  
 Իրա՞ւ էր այդ թէ ոչ անուրջ:

Մտացուրթեան սուգուեր ամէնքն անդունդն ի վար,  
 Կարծես անցած չըլլային այս կեանքին մէջէն,  
 Եւ անուններն իսկ շատերուն մոռցած եմ ա՛լ —  
 Բառեր՝ ջնջուած գիրքի մ'էջէն:

II

Պիտի երբեք ա՛լ չըզառնան օրերն անցեալ,  
 Չը հանդիպինք պիտի այլեւս դէմքերուն հին,  
 Ու կարօքը միայն, ինչպէս հուր անըսպառ,  
 Պիտի մընայ մեզի բաժին:

Ուրեմըն ա՞յս է գիրը խեղճ ադամօրդուն —  
 Բանալ աչքերն իր արեւուն գեղեցկուրթեան,  
 Ի զուր փնտռել իմաստութեան ակը ... համբուն՝  
 Իյնալ վի՞հը մտացուրթեան:

Եւ իր նիզէն իրեն ոչի՞նչ պիտի մընայ,  
 Պիտի ցնդի՞ Այնրօքայնի մ'միտը վըսեմ,  
 Շէյքսպիրի սիրքը պիտի անհետանա՞յ ...  
 Վերջն հանճարին ա՞յս է նըսեմ:

Տիւ ու գիւեր պիտի իրա՞ր յաջորդեն միտ,  
 Ու ձըմեռէն յետոյ գարնանը հարսնանայ,  
 Եւ խնդութեան պիտ' անպայման յաջորդէ վի՞տն...  
 Ոչի՞նչ պիտի նոյնը մընայ:

Պիտի դառնա՞նք որ մ'անպայման մեր տարրերուն,  
 Ու չունենա՞նք այլեւս բընաւ Երազ ու Սէր,  
 Պիտ' չըբախծի՞նք, մեր նայուածքը ուղղած հեռուն,  
 Ու չըսպասե՞նք ալ անհամբեր

'Ներկայութեան անոր որ որ մը պիտի գար,  
 Լեցնել մեր սիրսը անպատում երջանկութեամբ,  
 Պիտի ըլլար մեր երկինքի արեւ պայծառ,  
 Յըրեր ամէն մտուտ եւ ամպ:

### III

Բայց ծիւ - ծաղկին մէջ պիտ' դառնանք կեանքին նորէն,  
 Վերընձիւղին սերմերուն մէջ, հողին ներքեւ,  
 Պապը պիտի իր բռունիկին մէջ օրօրեն,  
 Ու հոսի կեանքը հեւ ի հեւ:

Հազար ձեռով վերադառնանք պիտի նորէն.  
 Նիւթէն - ոյժէն ոչինչ պիտի անէանայ.  
 Իբրեւ արցունք պիտի տեղանք մենք ամպերէն,  
 Ու հովին մէջ պիտի մընայ

Հառաչն ամէն մէկ անցորդին կարօտակէզ...  
 Սիրսը մարդուն պիտի ծըլի, ծաղիկ բանայ,  
 Ու Սէրն անոր ծիածանի կամար ինչպէս,  
 Միջոցին մէջ յաւերժանայ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

